

գրելով բախանել ամենայն վիճակա-
ւոր Մ. Բաղնորդաց ի հրահանգ և ի գի-
տութիւն ամենայն եկեղեցականաց, որ-
պէս զի յապագային ըստ այնմ վարին ։
Մ. Ես կանոնները տպուած են արդէն և
առ տակաւ խելամուտ լինելով այսպիսի
թերութեանց՝ մտադիր է գրաւոր եղա-
նակաւ յիշեցնել սոցա սրբազան պարտ-
քերը առ ազգն և առ Եկեղեցին Մ. Ե-
տուծոյ ։

մոզդոկի վարժատան բացման հանդէսը ։

Մ. Զգային լրագրները ամեն տեղե-
կութիւններէն աւելի ակորժանք և
եռանդով, ազգի ընդհանրութեան կը-
հաղորդէ Վարդաց բացուիլը, բարե-
կարգութիւնը և յառաջագիւտութիւնը ։
Եւ ոչ միայն մեր ազգը, այլ և Եւրո-
պիոյ բոլոր ուսեալ ազգերը հաստատ
դիտնալով որ ուսումը մտւոր և բա-
րոյական զարգացման յորդանոս աղբիւրն
է, և քանի որ Վարդաց թիւը կ'շատ-
նայ, այնչափ ազգ մի իւր երջանկութեա-
նը կ'մօտենայ ։ Մ. Ես վերայ տալակու-
ղը իւր անձին կենդանութեան վերայ
տարակուսած կ'լինի իրաւամբ ։ Վրդա-
որ մենք ուրախացանք պատուական լրա-
գրաց մէջ այս միջոցներս կարդալով
մի քանի քաղաքաց մէջ օրիորդաց և մանջ
տղայոց համար գեղեցիկ Ուսումնարան-
ներ կառուցուելուն, որ յայտնի նշան է
մեր ազգին նորաբորբոք ուսումնասիրուէ,

այնչափ ևս կ'շուտամք որ անկեղծ բերկ-
րութեամբ կ'լեցուն ազգին յառաջ-
դիմութեան նսխանհանդիւր եղող ան-
ձինք, նա մանաւանդ, ազգիս հարուստ-
ն'ը բարի օրինակ առնելով իւրեանց
մէկ անդամակցէն, որ առատաձեռն դը-
րամական զոհաբերութիւններով իւր
համաքաղաքակցաց համար հոյակապ ու-
սումնարան մի կառուցած է, որպէս զի
թէ նոցա և թէ ուրիշ ազգայնաց որդիքը
անոր մէջ կարողանան բուծանել իրենց
մտւոր ծարաւը ։

Մ. Ես ազգասէր անձը մեծապատիւ
Վարդգոր Ստեփաննոսեան Ս. Եւջմեանց,
որ 67 թուականին Ս. Ե. Ս. Վարդգիկոսին
ամենայն Հայոց Ս. Եւստատիոսի վիճակաց
այցելութեան ելած ժամանակը, վսու-
ռած նորա բարոյական և յորդորական
խօսքերէն, որով մեր ազգին Վարդոցնե-
րու ինչ աստիճանի կարօտութիւն ունե-
ցածը հասկացուցած էր նմա, ինչպէս որ
նաեւ այլոց բազմաց, խառնացեր է 200 ա-
շակերտ ընդունելու յարմար ուսումնա-
րան մի հիմնել ։ Մ. Ես յիրաւի իւր խոստ-
մունքը ամենայն հարազատութեամբ և
գովիլի հաստատամտութեամբ ի գլուխ
հաներ է ։ Ուսումնարանի բացման հան-
գէսը մեծ շքով կատարուեր է. նոյեմ-
ամսոյ 26 ին. և ըստ բարեհաճ կամաց
և ցանկութեան ազգասէր հիմնադրին՝
նուիրուած է Ս. Վ. Երզայ. քաջայաղթ զօ-
րավարի փառաւոր անուան ։ Հանդիսին
նկարագրութիւնը և եղած ճառախօսու-
թիւնը հանդիսի ատեն կ'յուզարկէ մեզ